

**ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎԱԽԱՆՏՈՒՄ
ԱՆՍՏՆԱԲԵՐԵԼՈՒԹՅ ԱՆՄԻՋԱՊԵՍ ՀԵՏՈ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ
ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄՎՈՂ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 33369/2021/ԿՈՒՎ4/Ա

ք. Երևան

31/08/2021

1. Գեորգի Խաչատրյան

(հարկային իրավախախտումը կատարած անձի անունը, ազգանունը)

ՀՎՀՀ

20244117

2.

ք. Երևան, Ավետիսյան 1, բն. 18

(բնակության (գտնվելու վայրի) հասցեն)

3.

000445213

(Ֆիզիկական անձի անձնագրային տվյալները և/կամ/ հանրային
ծառայությունների համարանիշը)

**4. Հարկային իրավախախտումների նկարագրությունը, ժամանակահատվածը, ձեռքբերված
տեղեկությունները և այն իրավական նորմերը, որոնց պահանջները չեն պահպանվել**

ՀՀ ՊԵԿ մաքսային մարմինների կողմից ստացված տեղեկությունների համաձայն՝ Ձեր կողմից 08.06.2021թ.-ին ԵԱՏՄ անդամ պետությունից ՀՀ տարածք է ներմուծվել 260 հատ ԱՏԳ ԱԱ 9405 ծածկագրին դասվող ապրանքներ՝ 20,800 ռուսական ռուբլի (համարժեք 148,512 ՀՀ դրամ) ինվոյսային արժեքով, ինչը գերազանցել է ՀՀ կառավարության 2020թ.-ի փետրվարի 13-ի «ՀՀ օրենքով սահմանված կարգով անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից ՀՀ ներմուծվող ապրանքների ակնհայտ առևտրային չափաքանակներն ու ներմուծման հարկային հայտարարագիր ներկայացնելու և անուղղակի հարկերի վճարումն իրականացնելու պարտավորության վերաբերյալ» թիվ 171-Ն որոշման N 1 հավելվածով սահմանված չափաքանակները (ԱՏԳ ԱԱ 9405 ծածկագրի համար՝ 3 հատ՝ յուրաքանչյուրից), ուստի Դ-ուք՝ ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 59-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ պարտավոր էիք ՀՀ կառավարության 2020թ. փետրվարի 13-ի թիվ 171-Ն որոշմամբ սահմանված չափաքանակը գերազանցող մասի համար Օրենսգրքի 77-րդ և 78-րդ հոդվածների համաձայն՝ հարկային մարմին ներկայացնել ներմուծման հարկային հայտարարագիր ու վճարել արդյունքում առաջացող ավելացված արժեքի հարկը՝ մինչև ապրանքները ՀՀ տարածք փաստացի ներմուծելու օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ: Օրենսգրքի 16-րդ հոդվածի համաձայն արտարժույթով արտահայտված գործարքների ու գործառնությունների շրջանակներում ԵՏՄ անդամ պետությունից ապրանքի ներմուծման կամ ԵՏՄ անդամ պետություն ապրանքի արտահանման գործառնությունների դեպքում ապրանքների ներմուծման կամ արտահանման գործառնությունների մասով ձևավորվող հարկման բազաները և ապրանքների սկզբնական արժեքները, որոնք որոշվում են համապատասխանաբար ապրանքը ՀՀ տարածք ներմուծելու (ՀՀ պետական սահմանը հատելու) կամ ապրանքը ՀՀ-ից արտահանելու (ՀՀ պետական սահմանը հատելու) ամսաթվի դրությամբ՝ ելնելով այդ օրը ՀՀ կենտրոնական բանկի հրապարակած՝ արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից, որպիսին հանդիսանում է տվյալ օրվան նախորդող օրը հրապարակված միջին փոխարժեքը:

**5. Ձեռքբերված տեղեկությունների սահմաններում պարտավորության նախնական հաշվարկը և
պատասխանատվության կիրառման իրավական հիմքերը**

Ֆիզիկական անձ Գեորգի Խաչատրյանի կողմից իրականացված վերը նշված ներմուծման գործարքի մասով հարկային մարմին չի ներկայացվել ներմուծման հարկային հայտարարագիր և չի վճարվել ԱԱՀ-ի գումարը, նման պայմաններում հարկային պարտավորությունների հաշվարկը կատարվում է հետևյալ կերպ.

Օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ ենթակետի և 61-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ԵՏՄ անդամ պետությունից ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքի ներմուծման դեպքում՝ ԱԱՀ-ով հարկման բազա է համարվում ներմուծվող ապրանք(ներ)ի ձեռքբերման արժեքը՝ **146,798 ՀՀ դրամ** $[(20,800/260 \times [260 - 3] \times 7.14 / \text{փոխարժեք})]$:

Օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն ԱԱՀ-ն հաշվարկվում է հարկման բազայի նկատմամբ 20 տոկոս դրույքաչափով՝ **29,360 ՀՀ դրամ ԱԱՀ գումար** $[146,798 \times 20\%]$:

Օրենսգրքի 401-րդ հոդվածի համաձայն՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ **482 ՀՀ դրամ** $(31/08/2021\text{թ. դրությամբ}) [29,360 \times 41\text{օր} \times 0.04\%]$:

Այսպիսով, ֆիզիկական անձի կողմից չկատարած հարկային պարտավորությունների գումարը առ 31/08/2021թ. դրությամբ կազմում է՝ **29,842 ՀՀ դրամ** $[29,360 + 482]$:

Հարկային պարտավորությունները հաշվարկվել են 31/08/2021 թվականի դրությամբ և ենթակա են վերահաշվարկման լրացուցիչ նյութերի ու փաստարկների առկայության և ներկայացման դեպքում:

6.Սույն արձանագրությանը կցվում են անբաժանելի մասը հանդիսացող

Մաքսային մարմինների կողմից տրամադրված տեղեկատվություն

7.Ընդամենը՝

8.Արձանագրությունը կազմած հարկային մարմնի պաշտոնատար անձի անունը, ազգանունը, ստորագրությունը

ՀՀ ՊԵԿ ՀՏՌ-Վ վարչության ԿՈՒՎ թիվ 4 բաժնի հարկային տեսուչի ժ/թ



Վիոլա Աբրահամյան